600.0268.12.08.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ

12 օգոստոսի 2020 թվականի №268Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի №748Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման լիցենզիա տրամադրելու մասին» №748Ա որոշման 2-րդ կետով հաստատված «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման ԼԷ №0633 լիցենզիայի պայմանների՝

1) №1 հավելվածի 1-ին կետի՝

ա. 2-րդ պարբերության բանաձևում «ԱՀբ» բաղադրիչից հետո ավելացնել «-ԱԵ» բաղադրիչը,

բ. 9-րդ պարբերության մեջ «ենթակա գումարն է» բառերից հետո լրացնել «(այսուհետ՝ փոխհատուցման գումար)» բառերը.

գ. 10-րդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«**ԱԵ-ն**» այլ եկամուտներն են:».

2) №1 հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետում, 2-րդ և 3-րդ ենթակետերի «բ» պարբերություններում «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետությունում պաշտոնական վիճակագրությունն իրականացնող իրավասու մարմնի կողմից» բառերով.

3) №1 հավելվածի 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13.Փոխհատուցման գումարը (ՓԳ) որոշվում է հետևյալ բանաձևով.

$$ՓԳ = \sum_{t=1}^{m} \left(Ս_t^{Հ} - Ս_t^{Փ}\right) * \left(1 + \frac{S}{100}\right) + ΔՓԳ,$$

որտեղ՝

m-ը Հանձնաժողովի նիստին սակագների վերանայման վերաբերյալ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող այն ժամանակահատվածի ամիսներն են (բացառությամբ նշված նախագծի ներկայացման ամսվան նախորդող ամսվա), որոնց համար սույն կետի համաձայն չի հաշվարկվել և սակագներում չի ներառվել փոխհատուցման գումար,

$Ս^{Հ}_{t}$-ն t-րդ ամսում Լիցենզավորված անձի հաշվարկային անհրաժեշտ հասույթի և գնվող էլեկտրական էներգիայի ու բաշխման ծառայության արժեքի տարբերությունն է, որը որոշվում է սույն մեթոդիկայի 14-րդ կետի համաձայն (դրամ),

$Ս^{Փ}_{t}$-ն t-րդ ամսում Լիցենզավորված անձի փաստացի անհրաժեշտ հասույթի և գնված էլեկտրական էներգիայի ու բաշխման ծառայության արժեքի տարբերությունն է, որը որոշվում է սույն մեթոդիկայի 15-րդ կետի համաձայն (դրամ),

S-ն փոխհատուցման գումարի վրա կիրառվող տոկոսադրույքն է, որն ընդունվում է հավասար 12 տոկոս,

ΔՓԳ-ն սակագների վերանայմամբ պայմանավորված լիցենզավորված անձի կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի միջին կշռված հաշվարկային սակագնի գործողությունը 12 ամսից պակաս կամ 12 ամսից ավել տևելու դեպքում փոխհատուցման գումարի ճշգրտման մեծությունն է, որը որոշվում է սույն մեթոդիկայի 15.1 կետի համաձայն (դրամ):».

4) №1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «15.1» և «15.2» կետերով.

«15.1 **ΔΦԳ** մեծությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\Delta\text{ΦԳ} = \text{ΦԳ}_{\text{գ}} * \left(1 - \frac{\text{Օր}}{365}\right),$$

որտեղ՝

ΦԳ$_{\text{գ}}$-ն լիցենզավորված անձի կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի միջին կշռված հաշվարկային սակագնի հաշվարկներում ներառված փոխհատուցման գումարն է (դրամ),

Օր-ն լիցենզավորված անձի կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի միջին կշռված հաշվարկային սակագնի գործողության օրերի թիվն է:

15.2 Այլ եկամուտները ներառում են լիցենզավորված գործունեության համար ներգրավված ակտիվների այլ նպատակներով օգտագործումից ստացվող լրացուցիչ հասույթների և դրանց պատճառով առաջացող լրացուցիչ ծախսերի դրական տարբերությունը:».

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
12 օգոստոսի 2020թ.